Անի ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԼՈՒԻՋԻ ՊԻՐԱՆԴԵԼԼՈՅԻ «ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՄԱՏՏԻԱ ՊԱՍԿԱԼԸ» ՎԵՊՈՒՄ

«Հանգուցյալ Մատտիա Պասկալը» այլաբանական վեպ է անձի ինքնության և մահվան մասին:

Պիրանդելլոն անդրադառնում է հաստատուն ինքնության գոյության խնդրին: Հայտնվելով իռացիոնալ իրականության տիրույթում՝ Մատտիայի կերպարը ենթարկվում է անկանխատեսելի և անխուսափելի իրադարձությունների ծավալմանը՝ դառնալով դրանց մեկնաբանը: Հոդվածի նպատակն է ցուցադրել սույն իրադարձությունների հորձանուտում Մատտիայի ինքնության կորստի հանգամանքը՝ ներքին՝ հոգեբանական և արտաքին՝ հասարակության հետ փոխհարաբերության համատեքստում: «Հանգուցյալ Մատտիա Պասկալը» վեպ է, որն արտահայտում է փիլիսոփայության և հոգեբանության շուրջ Պիրանդելլոյի հետաքրքրությունը:

Բանալի բառեր. *կոմեդիա դել արտե, Պիրանդելլո, դիմակ, թատրոն, հանպատրաստից խաղ, ինքնություն*

Պիրանդելլոյի ստեղծագործության կարևորագույն սկզբնակետերից մեկը «Ես»-ի ընկալումն է և դրա մեկնաբանումը: Ըստ Պիրանդելլոյի՝ մարդը և իր ստեղծագործությունը կյանքի անդադար շարժման մեջ դրված վերացարկված հասկացություններ են, որոնք հուսահատ կերպով փորձում են դադարեցնել վերջինիս անդադար փոփոխվող տարափը՝ այդպիսով խուսափելով ժամանակի և մահվան տառապանքից /Pirandello, 1973: 136/: Տառապանքից խուսափելու համար պիրանդելյան հերոսները ընտրում են քողարկման ուղին: Քողարկումը տեղի է ունենում ինքնության փոփոխմամբ՝ իրականությունից խույս տալու միջոցով: Հեղինակը ինքնության քողարկման խնդիրը արտահայտում է դիմակների օգնությամբ: Վերջինիս հերոսները, դիմակավորվելով, փորձում են հեռանալ իրենց «Ես»-ը շրջապատող կամ կաշկանդող իրավիճակներից, մարդկանցից, հանգամանքներից:

Ինչպես պնդում է Պիրանդելլոն, կյանքն անդադար ընթացք է, որը մենք ցանկանում ենք կանգնեցնել, սահմանել կայուն ձևերի մեջ ինչպես ներսում, այնպես էլ մեզնից դուրս, սակայն այդ հունը անհնար է կանգնեցնել, և դրա համար էլ այն շարունակվում է՝ անցնելով մեր ինքնության ձևավորման սկզբունքներից և մեր անհատականությունից /Pirandello, 1973: 137/: Ի տարբերություն Պիրանդելլոյի, իտալական փիլիսոփայական

դպրոցն այլ կարծիք էր ձևավորել այդ խնդրի շուրջ: Նեո-իդեալիստական դպրոցի հիմնական ներկայացուցիչները՝ Կրոչեն և Ջենթիլեն, երկուսն էլ Հեգելի մտքի հետևորդներ, համարում էին, որ «Ես»-ը հոգու ժամանակավոր դրսևորումն է: Ըստ Կրոչեսի՝ «Հոգին, որպես իր անցողիկ ձև, կերտել է այն կենսական սովորությունների և հակումների խումբը, որը մենք անվանում ենք անհատականություն» /Antoni, 1955: 99-110/: Որպես սրա հետևանք «հոգին կրելով անհատին իրենից դուրս՝ վերջինիս դուրս է բերում անհատականի տիրույթից՝ ստիպելով նրան ընդունելու այն ամենը, ինչն անցյալի իր էության մի մասն է, որը հոգին պետք է թողնի անցյալում՝ գնալով առաջ» /Croce, 1973: 20/: Մարդկային գոյության դրաման առանձին ուսումնասիրման չի ենթարկվում Կրոչեի մոտ, այն զուտ դառնում է երկրորդական հոգու հավերժության և կրոնական աշխարհընկալման ֆոնին:

Ինչ վերաբերում է Ջենթիլեին, նա դիտարկում էր մարդուն որպես ունիվերսալ և հավերժական ակտի անցողիկ դրսևորում՝ ընկալելով նրան որպես Աստված՝ ժամանակի տիրույթից դուրս. «Պատկերացումներից ոչինչ չի կարող էմպիրիկ լինել, միայն հոսող և ապագային համապատասխան ներկա իրականությունը <…> Ներկան անվերջանալի է և ժամանակի տիրույթից դուրս» /Gentile, 2015 [1916]: 153/:

Ի տարբերություն իտալացի վերը նշված փիլիսոփաների, Պիրանդելլոն հեռու է հոգու հեգելյան պատկերացումներից: Նրա հայացքը շատ ավելի հոռետեսական է: Պիրանդելլոն հետևում է Շոպենհաուերի և Բերգսոնի տեսլականին՝ համարելով իռացիոնալ կյանքը իրականության ձևավորման միակ սկզբունքը /Costa, 1981: 16/: Պիրանդելլոն չի ընդունում հոգու գոյությունը, քանզի դա բարոյական և տրամաբանական տեսանկյուններից արդարացնում է մարդկային տառապանքները: Պիրանդելլոյի հակահիդեալիստական կեցվածքը հաստատվում է ոչ միայն Շոպենհաուերի և Բերգսոնի հանդեպ նրա հիացմունքի, այլև էմպիրիկ հոգեբանության հանդեպ նրա հետաքրքրության միջոցով, որը հաստատում է, որ «Ես»-ի ավանդական ըմբռնումը զառանցանք է և, այսպիսով՝ նպաստում ռեալիզմից դեպի մոդեռնիզմ անցմանը /Costa, 1981: 17/:

Սույն գաղափարներն իրենց գեղարվեստական դրսևորումն են ստանում «Հանգուցյալ Մատտիա Պասկալը» վեպում, որտեղ հերոսը, ընկնելով իռացիոնալ կյանքի հորձանուտի մեջ, ոչ միայն կորցնում է կապը շրջակա իրականության, այլ նաև սեփական ինքնության հետ:

«Հանգուցյալ Մատտիա Պասկալը» Պիրանդելլոյի ամենահայտնի վեպերից է, որը հսկայական ազդեցություն է ունեցել 20-րդ դարի իտալական գրականության վրա: Հեղինակը վեպը գրում է 1904 թ.-ին և դրանով ազդարարում նոր փուլ իր ստեղծագործական ճանապարհի համար: Պիրանդելլոն հրաժեշտ է տալիս նատուրալիստական ար-

ձակին: Վեպի և՛ ոճը, և՛ բովանդակությունն ազդարարում են հեղինակի վերջնական հեռացումը ռեալիզմից և փիլիսոփայական պոզիտիվիզմից:

Ինչպես Պիրանդելլոյի շատ հերոսներ Մատտիան նույնպես զուրկ է հաստատակամությունից: Ինքնության որոնման ճանապարհին նա անվերջանալի տատանումների մեջ է: Բնավորության հակասական կողմերը ընթերցողը տեսնում է վեպի հենց սկզբից: Հեղինակը ստեղծում է անհաջողակի կերպար, ով խորապես դժգոհ է իր կյանքից: Մատտիան աշխատում է գրադարանում և չի սիրում գրքեր, ամուսնացած է, բայց չի սիրում կնոջը: Սրա հետ մեկտեղ կերպարն աչքի է ընկնում գրոտեսկային հատկանիշներով: Գրքերի նկատմամբ անտարբեր վերաբերմունքը չի խանգարում նրան ստեղծագործել. նա պատմում է ընթերցողին իր կյանքը, և այն անհավատալի դեպքերի մասին, որոնց ստիպված է լինում բախվել. «Այն ամենը, ինչ կատարվեց ինձ հետ, շատ արտասովոր է և տարօրինակ, այնքան տարօրինակ և սարսափելի, որ որոշեցի պատմել այդ մասին» (Pirandello, 1989: 154):

Ինքնաճանաչումը Մատտիայի համար հնարավոր է դառնում լոկ այն ժամանակ, երբ նա սկսում է կիսվել սեփական պատմությամբ: Հերոսի համար կարևոր է սեփական ինքնության զգացողությունը, իսկ կորցրած ինքնությունը նա փորձում է վերականգնել պատմելով սեփական կյանքի պատմությունը: Կարելի է ասել, որ հենց դա է կերպարի գլխավոր նպատակը վեպում՝ պատմել և դրա միջոցով դառնալ իրական:

Վեպի նախաբանում հերոսը նշում է, որ սեփական ինքնությունը միակ բանն է եղել, որում նա եղել է վստահ. «Այն քիչ բաներից մեկը, կարելի է ասել միակը, որում ես վստահ եմ եղել, այն է, որ ես Մատտիա Պասկալն եմ և դրանից օգուտ եմ քաղել: Այս պահի դրությամբ… ես կրկնակի մեռած եմ, առաջինը սխալմունքի արդյունք էր, իսկ երկրորդը՝ ավելի լավ է ընթերցեք ինքներդ» /Pirandello, 1989: 15/: Մատտիան հպարտացել է միշտ նրանով, թե ով է և չի պատկերացրել, որ միակ բանը, որը այս կյանքում իր հենարանն էր, նա կարող է կորցնել: Վեպի ներածության սկզբում պարզ է դառնում, որ չնայած Մատտիան է շարադրանքի հեղինակը, սակայն նա մեռած է: Պահը, երբ հերոսն իմանում է սեփական մահվան հանգամանքը, դառնում է շրջադարձային սեփական ինքնության ընկալման տեսանկյունից՝ սկիզբ դնելով Մատտիայի «դիմակավորման» ուղուն: Վեպը ավելի մանրամասն հասկանալու համար, պետք է փորձենք վերլուծել Պիրանդելլոյի կողմից վեպում կիրառվող դիմակը:

Նուրիտո Մելսեր-Պադոնը, վերլուծելով սույն դիմակը, համարում է այն ուղենշային՝ վեպի գաղափարական կողմը հասկանալու համար: Հեղինակն այն կոչում է “Impersonation mask” («Փոխակերպման դիմակ»), որի

հիմնական գործառույթը անձի քողարկումն է /Melcer-Padon, 2015: 359/: Սույն դիմակը ծառայում է «Ես»-ը քողարկելուն և վերաբերում է մասնավորի և հանրային ոլորտի երկակիությանը: Այն օգտագործվում է անձի կողմից իրականությունը կոծկելու նպատակով: Հեղինակը նշում է, որ Պիրանդելլոն հիմնականում օգտագործում է դիմակներ, որոնք իրենց գործառույթով մոտ են ծիսական դիմակներին, դիմակներ, որոնք արտահայտում են հասարակության համար կարևոր ընկալումները: Սույն հասկացությունը շատ մոտ է Յունգի “Persona” հասկացությանը, որն առնչվում է անձի հասարակական դեմքին և նրա հանրային կերպարին: Ըստ Յունգի՝ “Persona”-ն ավելի շուտ արհեստական անհատականություն է, որը կառուցված է հասարակության մեջ ինտեգրվելու անխուսափելի պահանջից, և որի ետևում կոծկվում է իրական «Ես»-ը /Jung, 1967: 158/: Վեպի հերոսը, քողարկելով ինքնությունը դիմակի ետևում, կերտում է հանրային մի կերպար, որտեղ քայքայման է ենթարկում սեփական կյանքը և ցանկությունները: Մատտիայի նպատակն է կերտել կապ դիմակի և հասարակության միջև: Դիմակի դաշտը իր մեջ է ներառում նաև ընթերցողին և վերջինիս ստիպում զգալ իրեն դիմակակիր:

Սյուժեի կենտրոնում Մատտիայի անցած ճանապարհն է և ինքնության փոփոխման ուղին: Դառնալով Ադրիանո Մեյս՝ Մատտիայի նպատակն է լուծել իր ֆինանսական խնդիրները և խուսափել ընտանիքի առջև ծառացած պարտականությունները լուծելուց: Մատտիայի դիմակը արտացոլում է ժամանակակից իրականությունը: Այլևս հնարավոր չէ հավատալ որևէ բանի, ամեն ինչ քողարկված է, այդ թվում նաև իրականությանը, որը ևս դիմակավորված է: Մարդն անզոր է տնօրինել սեփական կյանքը: Ինչպես նշում է Ջիանկառլո Մազզակուրատին. «Այլևս միտքը և սուբյեկտը չեն, որ պարտադրում են իրենց պատմական կոդն իրականությանը, այլ իրականը և բնականն են առաջարկում սեփական ալեգորիկ պայմանները մտքին՝ հավերժորեն մեկնաբանող սուբյեկտին» /Mazzacurati, 1995: 214/: Ինքնությունը դառնում է ոչ ավելին, քան մի ֆիքսված ձև՝ դիմակ, որով հերոսն ապրում է իր կյանքը և զգում իր հույզերը:

Չնայած Ադրիանո Մեյսի նոր դիմակը Մատտիային ազատում է իր բոլոր պարտականություններից և թույլ է տալիս նրան ժամանակավոր ազատություն ստանալ, այն չունի բովանդակություն, իրական կյանքում խարսխված անցյալ և հիշողություններ. այն պարզապես դատարկ պատյան է, որը վտանգավոր է: Մատտիան աստիճանաբար հասկանում է, որ դիմակավորվելը ավելի շուտ խնդիրներ է ստեղծում, քան լուծումներ տալիս: Քանի որ Մատտիան չունի որևէ տեսակի պաշտոնական փաստաթուղթ, նա չի կարողանում ինտեգրվել հասարակությանը: Նա չի կարող աշխատանք ունենալ և տուն գնել, նա չի կարող ճանաչվել հերոս, երբ

փողոցում պաշտպանում է մի կնոջ ՝ վախենալով հարցաքննվել իշխանությունների կողմից, ինչպես նաև չի կարող բողոքել ոստիկանությանը, երբ նրան թալանում են: Մատտիան չի կարող նույնիսկ շուն ունենալ:

Այստեղ առաջ է գալիս ազատության պարադոքսային կողմի՝ արգելք դառնալու թեման. «Սկզբում, - խոստովանում է նա, - իմ այս անսահման ազատությունը անկասկած գեղեցիկ էր, բայց ... նաև բռնակալ էր, քանի որ թույլ չէր տա նույնիսկ մի փոքրիկ լակոտ գնել» /Pirandello, 1989: 97/: Հերոսը գիտակցում է, որ դարձել է ոչ միայն օտարերկրացի, ինչպես շատ օտարերկրացիներ մեծ քաղաքում, այլ նաև «կյանքի համար օտար» /Pirandello, 1989: 102/:

Հերոսը ցանկանում է թողնել իր անցյալը, սակայն նոր կյանքի փնտրտուքները ստիպում են նրան անընդհատ բախվել անցյալից եկող խնդիրներին: Մատտիան ցանկանում է փախչել ընտանեկան բախումներից, սակայն թվացյալ ազատությունը ավելի է կաշկանդում հերոսին:

Այն պահին, երբ Մատտիան կողոպտվում է և չի կարողանում դիմել ոստիկանության, նա զգում է, որ վերջնականապես դուրս է մղվել կյանքի ընթացքից:

Պիրանդելլոն հարցականի տակ է դնում մարդու բացարձակ ազատության գաղափարը. արդյո՞ք մարդ կարող է լինել ազատ, երբ հասարակությունը սահմանափակում է նրան:

Մարդը սոցիալական էակ է և մարդուն պետք են մարդիկ երջանիկ լինելու համար: Միևնույն ժամանակ մարդկային յուրաքանչյուր տեսակի ըմբռնում հասկանալի է դառնում միմյանց նկատմամբ համեմատությունների օգնությամբ: Ուրիշների հայացքը դեպի մեր անձը ձևավորում է մեր սեփական պատկերացումները սեփական ինքնության մասին ոչ միայն մեր ընկալումների սահմաններում, այլև այն տեսլականի սահմաններում, որոնք բնորոշ են տվյալ անհատին, և որոնցով նա տեսնում և մեկնաբանում է իրականությունը: «Մյուսները ոչ այլ ինչ են, եթե ոչ լինելիություն, որոնք մենք զգում և ճանաչում ենք մեր մեջ, քանի որ այն, ինչ իրենցից ներկայացնում են ուրիշները, մենք իրականում չգիտենք» /Pirandello, 1973: 1275/: Յուրաքանչյուրն արտացոլում է դիմացինին և դիմացի արտացոլանքում տեսնում սեփական «Ես»-ը: Մարդը անվերջանալի արտացոլանքների տիրույթում է և այլևս չի տեսնում իրականը:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ իրականությունը ամբողջապես ընկալել հնարավոր չէ: Կարելի է այն դիտել տարբեր տեսանկյուններից և մեկնաբանել սեփական պրիզմայի միջով: Ինչպես նշում է Դարիա Ֆարաֆանովնան, այս փոխհարաբերությունների ամբողջությունը ձևավորում է բանտարկյալ մարդու կերպարը Պիրանդելլոյի ստեղծագործությունում՝ հիմնված այն ազդեցության վրա, որն ուրիշներն ունեն դեպի մեր անձը:

Դա իր հերթին ինչ-որ կերպ փոխակերպում է մեր էությունը, որի մասին ընդհանուր պատկերացում մենք այնուամենայնիվ չենք կարող ունենալ /Farafonova, 2013: 36/: Մատտիա Պասկալը այլևս ունակ չէ ընկալելու իրականությունը: Վերջինս սեփական տեսանկյունից է մեկնաբանել այն՝ հաշվի չառնելով այն «բազմակի իրականությունները», որոնք կերտվում են շրջապատի և այլ մարդկանց հետ շփման արդյունքում, ինչն էլ ստիպում է հերոսին զգալ իրեն բանտարկյալ:

Սրա հետ մեկտեղ, չնայած երկու տարվա ճանապարհորդություններին, Մատտիան, իրեն մենակ է զգում և ցանկանում է սոցիալական կապեր հաստատել: Դա ցույց է տալիս մարդկային շփման անհրաժեշտությունը հերոսի կյանքում: Դիմակն օգտակար չէ առանց համայնքի մասնակցության և, հատկապես, առանց համայնքի կողմից դիմակի ճանաչման և ընդունման: Միևնույն ժամանակ դիմակը խոչընդոտ է իրական հաղորդակցություն հաստատելու համար: Այն ձևավորում է այսպես կոչված «սոցիալական սուտ», որը ստիպում է խաբել ինքներս մեզ՝ ապրելով մեր հոգեկան էության մակերեսին /Pirandello, 1973: 148/: Այսպիսով՝ Մատտիան տատանման մեջ է: Հասարակության հետ շփման ցանկությունը և դրա անհնարինությունը վերջինիս դնում են ծանր կացության մեջ: Չնայած նա որոշում է վերադառնալ իր նախնական կյանքին, սակայն դա այլևս հնարավոր չէ. նրա ընտանիքն ու քաղաքը վաղուց են հարմարվել հերոսի բացակայությանը, և Մատտիան որոշում է գթալ իր վերստին ամուսնացած կնոջը ու հեռանում:

Պիրանդելլոն խոսում է իրական շփման անհնարինության մասին, քանզի հաղորդակցական գործընթացը, որի հիմքում մեր մտորումների անբեկանելիությունն է և ուրիշների մասին մեր պատկերացումների անբեկանելիությունը, ոչնչանում է դիմակների միջև ձևավորված փոխհարաբերությունների արդյունքում, որոնք անգամ իրենք իրենց չեն ճանաչում /Pirandello, 1973: 14-15/: Ուրիշների հայացքը ձևավորում է մարդուն, ձևավորում և փոխակերպում նրան: Ուրիշների հայացքի ֆիքսվածությունը, խեղդում է Պասկալին՝ պատճառելով բազմակի զգալու անտանելի տանջանք. «Ես տեսնում եմ, որ ապրում եմ այնքան հայելիների առաջ, որքան աչքեր կան» /Pirandello, 1989: 1270/:

Պիրանդելլոն վերլուծում է մարդկային էության ներքին կողմը: Ըստ հեղինակի, «Ես» և «Ինքնություն» հասկացությունները տարալուծվում են հասարակության հետ շփման արդյունքում: Մարդն, այնուամենայնիվ, չի կարող ամբողջական պատասխանատվություն կրել իր արարքների համար, քանզի կրում է շրջակա միջավայրի ծանր ազդեցությունը սեփական որոշումների վրա: Ազատագրվելու բոլոր փորձերը հանգեցնում են բախումների: Հերոսին չի հաջողվում պահպանել իր ինքնությունը և միաժամանակ ապրել երջանիկ և ազատ կյանք, որովհետև նրա ազատությունը պա-

ռադոքսալ կերպով պայմանավորված է շրջակա միջավայրի սահմանած օրինաչափություններով:

Եթե փորձենք առանձնացնել այն հիմնական գաղափարները, որոնք արտահայտվում են դիմակի օգնությամբ սույն վեպում, ապա դրանք փիլիսոփայական գաղափարներն են մարդու սոցիալական կացության մասին, որոնք ստիպում են վերջինիս քողարկել իր բնական էությունը՝ փոխարինելով այն հասարակության կողմից առաջարկված դիմակներով:

Միևնույն ժամանակ, ազատումը «հայացքի բանտից», հարաբերությունների ցանցից, որում ժամանակի ընթացքում ինքնությունն է ձևավորվում, պարադոքսալ կերպով հանգեցնում է սեփական «Ես»-ի կորստին, ինչը, պարզվում է, սեփական բազմակի և հակասական կարծիքների և հավատամքների ամբողջություն է: Այսպիսով, ինքնությունը դառնում է հերոսի համար և՛ բանտ, և՛ ազատագրման ուղի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Antoni C. Commento a Croce. Venezia: Neri Pozza, 1955.
2. Costa G. Self and Representation in Pirandello's Henry IV. New York: NeMLA, 1981.
3. Croce B. Sins of Thought // *The Conduct of Life*. Harcourt: Brace and Co, 1973.
4. Farafonova D. Pirandello lettore di Pascal. Premesse al Fu Mattia Pascal Author. Firenze: Casa Editrice Leo S. Olschki, 2013.
5. Gentile G. Teoria generale dello spirito come atto puro. Brindisi: Edizioni Trabant, 2015.
6. Jung C. Symbols of Transformation: An Analysis of the Prelude to a Case of Schizophrenia. London: Routhledge & Kegan Paul, 1956.
7. Mazzacurati G. Pirandello nel romanzo europeo. Bologna: Il Mulino, 1995.
8. Nourit Melcer-Padon. Mattia Pascal's Punitive Mask. New York: Italica, 2015.
9. Pirandello L. Arte e coscienza d'oggi in Saggi, poesie, scritti. Milano: Mondadori, 1973.
10. Pirandello L. II berretto a sonagli, La giara, II piacere dell'onesti. Milano: Mondadori, 1974.
11. Pirandello L. Il fu Mattia Pascal. Milano: Mondadori, 1989.

А. АМБАРЦУМЯН – ***Проблема поиска идентичности в романе Луиджи Пиранделло «Покойный Маттиа Паскаль».*** **–** «Покойный Маттиа Паскаль» - аллегорический роман о личности и смерти человека. В романе Пиранделло ставит под сомнение стабильность человеческой идентичности. Маттиа становится участником непредсказуемых и неизбежных событий, пытаясь их интерпретировать. В статье показано, как потеря идентичности Маттии влияет на его внутренний мир и обуславливает внешнюю борьбу с обществом. Роман отражает большой интерес Пиранделло к философии и психологии. В романе поднимаются темы, которые углубляются в психологию и философию, интерпретируя их через художественное восприятие.

Ключевые слова: комедия дель арте, Пиранделло, маска, театр, импровизация, личность

A. HAMBARDZUMYAN – ***The Problem of Search of Identity in the Novel "The Late Mattia Pascal" by Luigi Pirandello.*** **–** "The Late Matthias Pascal" is an allegorical novel about person's identity and death. In "The Late Mattia Pascal" Pirandello questions the stability of human identity. Mattia becomes a participant in unpredictable and inevitable events, trying to interpret them. The paper demonstrates how the loss of Mattia's identity affects his internal world and creates external struggles with the society. Pirandello's work reflects his great interest in philosophy and psychology. The play raises topics that go deep into these fields interpreting them through artistic perspective.

Key words: commedia dell'arte, Pirandello, mask, theatre, improvisation, identity

Ներկայացվել է՝ 03.02.2021
Երաշխավորվել է ԵՊՀ արտասահմանյան գրականության
ամբիոնի կողմից
Ընդունվել է տպագրության՝ 11.11.2021